[illegible]ԾՎԱԾՔՆԵՐԻ
ԿՈ[illegible]ԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ

## ՈՒՂԻՆԵՐԻ ՀԵՐԹԱՊԱՀԻ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹԳԾԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
1936

656
Հ-99

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԿԱԹՈՒՂ. ԾԱՌԱ-ՅՈՂ, ՎՈՐԸ ՀԵՐԹՈՎ ԿՑՈՒՄՆԵՐ Ե ԿԱՏԱՐՈՒՄ, ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐ-ՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ ՊԵՏՔ Ե ՀՐԱՀԱՆԳ ՈՒՆԵՆԱ

ՀՐԱՀԱՆԳԸ ՏՐՎԱԾ Ե

| Ա Զ Գ Ա Ն Ո Ւ Ն | Աշխատանքի տեղը | Թե յե՞րբ է տրված |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

656
Հ-99

24 SEP 2010

ЦЕНТР. ГОСБИБЛИОТЕКА ССР
Инв. № 1060

656.217

ՀՃԺԿ
ՎԱԳՈՆԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ
## ՈՒՂԻՆԵՐԻ ՀԵՐԹԱՊԱՀԻ

| | |
|---|---|
| Ե / 588 | Ներկա հրահանգը պետք է մտցվի «Երկաթուղային գործակալներին ձեռնարկներով մատակարարման կանոններում» (բր. 0/198) ըստ կարգի № 419 համարի տակ: |

ԼՇԿ—4

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹԳԾԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԹԻՖԼԻՍ 1936

24.137

17 JUN 2013

Թարգմանիչ՝ Դաղբաշյան
Խմբագիր՝ Բերիև
Թողարկիչ՝ Միրկովիչ

Տպ «Զարյա Վոստոկա»-ի Ա. Ց. Մյասնիկյանի անվան

Պատվեր 297 Գլավլիտ B-1344 Տիրաժ 400

Հաստատում եմ
Շահագործման կենտրոնական
կառավարչության պետի փոխարեն՝ ԱՐՆՈԼԴՈՎ
25 հունվարի 1935 թ.

# ՀՐԱՀԱՆԳ

## ՈՒՂԻՆԵՐԻ ՀԵՐԹԱՊԱՀԻ

### I. *Ուղիների հերթապահի պաշտոնի նշանակումը և պայմանները, վորոնք ուղիների հերթապահը պարտավոր է բարելավել*

§ 1. *Ուղիների հերթապահ նշանակվում է կայարաններում, վորտեղ ուղիների քանակությունը նրանց զարգացումը և տեղային մանևրները պահանջում են անմիջապես ղեկավարել մանևրային շոգեշարժի աշխատանքները և ապահովել՝*

*ա) Կանոնավոր և իր ժամանակին մանևրների կատարելը գնացքների կազմակերպման համար, գնացքներն ուղարկելու համար ըստ չվացուցակի և համաձայն տեխնիկական կանոնների ու սահմանված մարշրուտիզացիայի և հատկավորման սխեմաների.*

*բ) Վագոններն իր ժամանակին և կանոնավոր ջոկելը կանգնեցնելով նրանց բեռման, բեռնաթափման, ռեմոնտի տեղերում նույնպես և այդ օպերացիաների վերջացնելը հավաքելով նրանց գնացքների մեջ և կայարանից ուղարկելու համար.*

գ) Վերահաս լինել ուղիների կանոնավոր հատակավորման, սլաքների, ազդանշանների, արգելակային սանդալների, գործիքների մաքուր և սարքին պահելը և նրա աշխատանքի շրջանում պահակային և պաշտոնեական շինությունների մաքուր պահելը.

դ) Վորամածներում աշխատող, պատրաստող բրիգադների, սլաքավորների, բաշմաչնիկների և ուրիշ նրա ստորադրյալ աշխատավորների յերթևեկի անվտանգությունն ապահովելու համար.

յե) Մանևրային շոգեշարժերն իր ժամանակին ուղարկել ըստ գծագրի եկիպիրովկայի համար.

§ 2. Ուղիների հերթապահն իր պարտականությունները կատարելիս հանդիսանում է մանևրային աշխատանքի ղեկավար, ըստ կայարանային դիսպետչերի պատվիրանքների (ուր այդ պաշտոնը ընդունված է) կամ կայարարանի հերթապայի, ստեղծելով անձնական նախաձեռնությունն արագացնելու ստացած պատվիրանքների ճշտիվ իրագործումն:

§ 3. Ուղիների հերթապահի անմիջապես իրավասության տակ գտնվում են՝

ա) Նրա սպասարկման մանևրային շրջանում բոլոր ուղիների կառուցվածքները, բաց առեալ գլխավոր և ընդունման ու ուղարկման ուղիների.

բ) Բոլոր կազմերը, վագոնները և մանևրային շոգեշարժերը, վորոնք գտնվում են նրա մանևրային շրջանում.

§ 4. Ուղիների հերթապահի պաշտոնով նշանակվող աշխատավորը պետք է բավարարե հետևյալ պահանջները՝

ա) Չլինի փոքր 18 տարեկանից:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
43416-63

բ) Չունենա ֆիզիկական պակասություններ, վորոնք կարող են ազդել ուղիների հերթապահի պարտավորությունների կատարման ժամանակ (կանխավ անցկենալ բժշկական զննումը).

գ) Ունենալ կայարանի հերթապահի պաշտոնի գործնական աշխատանքի ստաժ, վոչ պակաս քան մի տարուց կամ կայարանի գնացքների կազմիչի, ուր նա նշանակվում է, վոչ պակաս 3 տարուց բռնելով սահմանված քննությունը:

§ 5. Ուղիների հերթապահը պետք է գիտենա՝

ա) Տեխնիկական շահագործման կանոնները և նշանավորության կանոնները.

բ) Բանվորների և ծառայողների կարգապահության կանոնադրությունը յերկաթուղու տրանսպորտում.

գ) Սույն հրահանգը, նույնպես և պաշտոնական հրահանգները և նրա ստորադրյալ աշխատավորների պարտականությունները.

դ) Գնացքների յերթևեկման չվացուցակը և գնացքների հատկավորման և մարշրուտիզացիայի սխեման.

յե) Բեռների բաց շարժական կազմի բարձման կանոնները:

զ) Կայարանի տեխնիկական կարգադրիչ ակտը, վորամածների (парк) տեղավորումը (распределение), և նրանց հատկավորումը (специализация), տարողությունը (в местимость), ուղիների հատկավորումն ու համարագրումը և նրանց տեղական անունները, սլաքային պահականոցների քանակը, հատկացումն համարագրությունը և նրանց նշանակումը, մուտքի, յելքի

մանևվրային և ուրիշ ազդանշանների կարգավորումը, ջուր մատակարարող սյուների տեղավորումը, օժանդակ (вспомогатель) գնացքների ձնամաքրիչների և այլն գնացքների կացուրդի համար սահմանված ուղիներ.

ե) Տվյալ կայարանի տեխնիկական աշխատանքի պայմանները և նամանավանդ նրա մանևվրային աշխատանքի շրջանի պայմանները յերթևեկության անվտանգությունն ապահովելու համար.

զ) Մանևվրային աշխատանքի արտադրությունը և գնահատման նորմանները նույնպես և նրանց սրբագրության կարգը։

## II. Ծառայության նշանակելու, տեղափոխելու և արձակման կարգը

§ 6. Ուղիների հերթապահները նշանակվում են պաշտոնի, տեղափոխվում են ուրիշ պաշտոնի և արձակվում են ծառայությունից շահագործման բաժանմունքի պետի կարգադրությամբ ըստ կայարանի պետի ներկայացման։

## III. Ստորադրության (подчинении) կարգը

§ 7. Ուղիների հերթապահը ստորադրյալ է կայարանապետին և նրա ավագ օգնականին, իսկ օպերատիվ աշխատանքին վերաբերյալ՝ կայարանային հերթապահ դիսպետչերին. կայարանում, ուր կայարանային դիսպետչերների շտատը չի սահմանված, ուղիի հերթապահը, օպերատիվ աշխատանքում ստորադրվում է կայարանի հերթապահին։

Ուղիների հերթապահի հերթապահության ժա-



մանակ նրան ստորադրված են նրա մանևվրային շրջանում աշխատող աշխատավորները.

ա) Ավագ և կրտսեր սլաքավարները.

բ) Գնացքների կազմիչները և վագոնների կցիչները.

գ) Ավագ և կրտսեր բաշմաչնիկները.

դ) Մանևվրային շոգեշարժերի բրիգադները.

յե) Վագոնների արտադրիչները, կշռողները և բոլոր ուրիշ աշխատավորները, վորոնք մասնակից են գնացքի կազմի մշակման։

## IV. Ուղիների հերթապահի պարտականությունն ուղիներում հերթապահություն ընդունելու և հանձնելու ժամանակ

§ 8. Ուղիների հերթապահը պարտավոր է հերթապահությունը ընդունել համաձայն կայարանապետի հաստատած հերթապահության գծագրի և հերթապահության ժամանակ ընդմիշտ գտնվել նրան հանձնված կայարանի շրջանում։

Հերթապահությունների գծագրից շեղումը կարող է թույլատրվել միմիայն կայարանապետի թույլատվությամբ։

§ 9. Հերթապահությունը ընդունելով ուղիների հերթապահը պարտական է ծանոթանալ կայարանի ընդհանուր օպերատիվ աշխատանքի նախագծի հետ և մասամբ նրա այն մասի հետ, վորը վերաբերվում է նրա շրջանի աշխատանքին, այսինքն շարժական կազմերի ուղիներում դասավորելու մանևվրային աշխատանքի ընդհանուր դրության, մանևվրային միջոցների հետ չկատարված պատվերների հետ և ընթացիկ կարգադրությունների հետ վերաբերյալ պատվիրանքներին.

համոզվել ուղիների, սլաքների, ազդանշանների և ուրիշ կառուցվածքների կանոնավոր դրության մեջ գտնվելը, վորոնք կապված են յերթևեկության անվտանգության հետ, նույնպես և ստուգել իր հերթափոխության տեղերում աշխատավորների առկայությունը.

§ 10. Ուղիների հերթապահը հերթապահությունը հանձնելու ժամանակ պարտավոր է անձամբ հանձնել և պարզաբանել հերթապահության ընդունող ուղիների հերթապահին, նույնպես և գրել սահմանված գրքում, թե նրա շրջանի սահմաններում մանեվրային աշխատանքն ինչ դրության մեջ է գտնվում, վորպեսի պատվերները չեն կատարված, ինչ ուղիներ են և ինչով են բռնված, վորոնք նրանցից ազատ են, ինչպեսի սահմանափակումներ և արգելքներ են գործում վորտեղ են գտնվում հապաղեցրած բեռնված վագոնները, քանի հատ են և այլն:

§ 11. Ուղիների հերթապահները հերթապահությունը ընդունելիս և հանձնելիս պարտավոր են ձևակերպել ստորագրելով գնացքների յերթևեկության սեղանի մատյանում կայարանի հերթապահի մոտ, վորը միևնույն ժամանակ ներկայանում է սույն հրահանգի § 9 պահանջների իրագործումն:

§ 12. Ուղիների հերթապահները պարտավոր են ի կատար ածել նախընթաց հերթապահության բոլոր չկատարված կարգախմբերը և աշխատանքները, մանեվրային աշխատանքը բաշխել իր փոխարկման կազմիչների մեջ և անմիջապես ղեկավարել մանեվրային շոգեշարժերի աշխատանքները:



## V. Ուղիների հերթապահի պարտականությունները հերթապահության ժամանակ

§ 13. Ուղիների հերթապահն աշխատանքի պրոցեսում պետք է անմիջապես կապ ունենա տեխնիկական գրասենյակի աշխատանքի հետ, փոխարկման վագոնառեմոնտի կետերի աշխատավորների հետ, վորպեսզի ապահովել գնացքների իր ժամանակին ներկայացնելը տեխնիկական զննման համար, դուրս գրելով և կազմելով կայարանում սահմանված գնացքների փաստաթղթեր:

Ուղիների հերթապահը պարտավոր է՝

ա) իր ժամանակին ընդունման ուղիների ազատելը գնացքներից, վորոնք ժամանած են կայարան վերակազմվելու համար, նույնպես և ղեկավարել մանեվրային աշխատանքով վագոնները վերակազմելու և բաժանելու համաձայն նրանց հարկավորման.

բ) ղեկավարել մանեվրային աշխատանքները գնացքներն իր ժամանակին կազմել ըստ տեխնիկական շահագործման կանոնների և տվյալ կայարանի համար սահմանված գնացքների հատկավորման և մարշրուտիզացիայի սխեմի.

գ) ապահովել գնացքային կազմերի իր ժամանակին ներկայացնելը տեխնիկական կամ փոխարկման գրասենյակին ընդունելու կամ դուրս գրելու համար, նույնպես և վագոնների զննիչներին գնացքային կազմերի ավտոարգելակի մասի ռեմոնտի և փորձարկման համար:

դ) Կայարան ժամանող մարշրուտային գնացքների մշակումը կատարել առավել ևս արագ.

ե) Գտնվել անմեկին և նրա հանձնարարած շրջանում և սերտ կապ ունենալ կայարանային հերթապահ դիսպետչերի հետ, իսկ այնտեղ, ուր այդպիսի պաշտոն չի սահմանված, կայարանի հերթապահի հետ և զեկուցանել նրան օրական ոպերատիվ աշխատանքի կատարման և տեղի ունեցած դժվարությունների մասին.

զ) Թույլ չտալ կայարանում վագոնների (простой) պարապուրդի համար սահմանված նորման գերազանցել գործառնության ժամանակ.

է) Կանոնավոր օգտագործել նրա տնօրինության տակ յեղած մանևրային միջոցները, թույլ չտալով ապարդյուն աշխատանքներ ու պարապուրդ (простой) և ապահովել նրանց իր ժամանակին էկիպիրովկայի կատարելը: Էկիպիրովկա կատարելու ժամանակ, նայած աշխատանքների հանգամանքներին, հաղորդել կայարանային դիսպետչերին կամ կայարանի հերթապահին փոխանորդ մանևրային շոգեշարժի նշանակելու անհրաժեշտության մասին.

թ) Մշտական իրազեկ լինել կայարանում վագոնների առկայության մասին և այդ մասին կապ ունենալ ուղիների ուրիշ հերթապահների հետ և յեթե կայարանում մի քանի առանձին մանևրային շրջաններ կան, այն ժամանակ և կայարանի հերթապահների հետ:

§ 14. Տեղական մանևրային աշխատանքն իր ժամանակին կատարելն ապահովելու համար ուղիների հերթապահը պետք է անմիջապես վերահաս լինի, վորպեսզի՝



ա) Բարձման տեղերում իր ժամանակին տրվեն սարքին դատարկ վագոններ.

բ) Լիաբեռնումն, գերաբարձումն և տեսակավորումն վերջացնելուց հետո բեռնած վագոններն իր ժամանակին պետք է սարքատել ըստ իրենց ընթացքի նշանակման ուղիներում և գրվեն գնացքների կազմում առաքման համար.

գ) Ըստ նշանակման բեռնաթափման կամ տեսակավորման յեկած վագոնները գնացքը տեսակավորումից հետո առանց հապաղման պետք է գրվեն բեռնաթափման տեղերը.

դ) Բեռնաթափումը և տեսակավորումն ավարտելուց հետո, դատարկ վագոնները պետք է իր ժամանակին կարգի բերվեն և կանգ առնեն նրանց համար նշանակած ուղիներում.

յե) Հիվանդ վագոնները պետք է իր ժամանակին գրվեն ռեմոնտի ուղիում համաձայն զննիչների նշանների.

զ) Գերաբարձման յենթակա բեռնած վագոնները, նույնպես և սարքին դատարկ վագոնները կդրվեն իրենց վերաբարձման ուղիների վրա՝ չսպասելով առանձին գրավոր կարգադրի.

է) Վագոնային սպասավորության աշխատավորից տեղեկություններ ստանալով նորոգված վագոնների պատրաստության մասին և նորոգման ուղուց կարմիր ազդանշանները վերցնելու մասին, անմիջապես պետք է բաժանել վագոններն այդ ուղիներում և բեռնած վագոնները պետք է գրվեն գնացքների նրանց ուղարկելու համար, իսկ դատարկ կանոնավոր վագոնները գրվելու յեն նրանց համար ուղիում հատկացրած

տեղում. հիվանդ վագոնները, վորոնք դուրս են յըլած վերաբեռնումից, պետք ե դրվեն, առանց հապաղման ռեմոնտի ուղիները:

§ 15. Ուղիների հերթապահը, իրեն հանձնված շըրջանի սահմաններում յերթևեկի անվտանգության պատասխանատու լինելով, պարտավոր ե՝

ա) Առանց կայարանի հերթապահի թույլտվության թույլ չտալ մանեվրային և ուրիշ շոգեշարժներին ու կազմերին անցնել դեպի գլխավոր ընդունման և առաքման ուղիները, նույնպես և թույլ չտալ մտնել նրա շրջանին չպատկանող տեղերը՝ առանց այդ շըրջանների ուղիների հերթապահների կամ այլ սպասավորության աշխատավորների թույլտվության, յեթե ուղիները գտնվում են ուրիշ սպասների տրամադրության տակ.

բ) Հրահանգել իրեն ստորադրյալ հերթափոխության աշխատավորներին և պահանջել տեխնիկական շահագործման կանոնների ճշտիվ կատարումն, վորոնք հրատարակված են ի զարգացումն ուղիում այլ դրությունների, կանոնների և կարգադրությունների, նըշանատուքի կանոնների նույնպես և պահանջել նրանցից յերկաթուղու բանվորների և ծառայողների կարգապահության մասին կանոնադրության կատարումն.

գ) Վերահաս լինել ուղիների, սլաքների, ազդանըշանային սարքերի և նրա շրջանի սահմաններում յերթևեկի անվտանգության հետ կապ ունեցող կառուցվածքների կանոնավոր դրության վրա, իր ժամանակին յերևան հանել այդ կառուցվածքների անկանոնությունները և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել նրանց վերացնելու համար.



դ) Առանձին ուշադրություն դարձնել սլաքների իր ժամանակին ճշտապահ մաքրելու և նրանց կարգի բերելու վրա, սլաքները և վագոնները ուղիներում կանոնավոր դրության մեջ պահելու, համապատասխան կերպով ամրացնելով և նամանավանդ ամրացնել ու ազդանշաններով պատպարել վտանգավոր բեռներով բարձած վագոնները, սլաքային ցուցիչների և ուրիշ կայարանային ազդանշանների կանոնավոր դրության և իր ժամանակին լուսավորելու վրա: Հերթապահ կազմիչների, կցիչների, շոգեշարժային բրիգադների, սլաքավարների և տեխնիկական դրասենյակների աշխատավորների իրենց տեղերում գտնվելու վրա:

§ 16. Ուղիների հերթապահը պարտավոր ե մանեվրային շրջանում սիստեմատիկ կերպով շրջագայում կատարել և հետամուտ լինել, չթողնել դեպքեր, յերբ վագոնները յերկար պարապուրդ ունեն կայարաններում սպասելով իրենց ուղարկման, և պետք ե միջոցներ ձեռք առնել պարզաբանել պարապուրդի պատճառները և այդպիսի վագոններն ուղարկել կայարանից:

Ուղիների հերթապահը պարտավոր ե ընդունել և անհապաղ կատարել բոլոր կարգախմբերը, վորոնք նա ստանում ե վագոնների ուղարկման համար, թույլ չըտալով կետանցում բեռների տեղափոխման մեջ ըստ իրենց նշանակման:

§ 17. Ուղիների հերթապահը պետք ե հսկե, վոր վագոնային ուղեմասի տեխնիկական աշխատավորներն իր ժամանակին ներկայանան գնացքներին և առանձին վագոնների խմբերին՝ տեխնիկական ստուգման համար, կատարելով ստուգումն վորոշ ժամանակամի-

ոգում և միջոցներ ձեռք առնել սահմանված կարգը չխախտել։

§ 18. Ուղիների հերթապահն իր հերթափոխության կազմից բրիգադներին ցուցումներ է տալիս ուղիներով ոգտվելու կարգի վերաբերյալ, ղեկավարվելով ուղիների համար սահմանված հարկավորումով, պետք է ծանոթացնե իրենց աշխատանքի հերթափոխության պլանի հետ, հսկելով կազմիչներին մանևրներ կատարել ճիշտ կանոնների հիման վրա։

§ 19. Գնացքային շոգեշարժները դեպոյից անցնելիս դեպի վագոնակազմը միացնելու համար, կամ ժամանած գնացքներից դեպի դեպո գնալիս՝ ուղիների հերթապահը պետք է բոլոր միջոցները ձեռք առնե, որ այդ շոգեշարժները չբռնվեն ուղիներում մանևրների կազմերի պատճառով և անցաթողնվեն ըստ նըշանակման առանց կետացման։

§ 20. Ուղիների հերթապահը պարտավոր է առանձին ուշադրություն դարձնել առ այն, որ մանևրաների ժամանակ վագոնները չցրվեն կայարանում առանձնակի, այլ կենտրոնացվեն, յուրաքանչյուր կատեգորիայի վագոնների համար նշանակված տեղերում, հավասարաչափ բաշխելով արգելակային վագոնները և այնպիսի հաշվարկով, որ հետո մինիմալ ժամանակամիջոցում կարելի լինի կազմել գնացքի կազմ։

§ 21. Վագոնների վորմածի ուղիներում դատարկ և բեռնած վագոնների կուտակումը ըստ քանակի, վորը դժվարություն կառաջացնե մանևրային աշխատանք կատարելիս, ուղիների հերթապահը պետք է դիմե կայարանային հերթապահ դիսպետչերին կամ կայարանի հերթապահին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք



առնել նրան հանձնած շրջանում աշխատանքները թեթևացնելու համար։

§ 22. Այն դեպքում, յերբ մեքենավարը հայտաբարում է մանևրային շոգեշարժի փչացումը և նրան դեպի դեպո ուղարկելու անհրաժեշտության մասին, ուղիների հերթապահը պետք է պահանջի փոխարինել ուրիշ շոգեշարժով, իսկ մինչև նրա յելքը մանևրային աշխատանքը վերստին բաժանել մնացյալ շոգեշարժերի միջև։

§ 23. Ուղիների հերթապահը պարտավոր է հսկել, որ նրա աշխատանքի շրջանում շարժական կազմը, բեռները և կառուցվածքները պահպանվեն տվյալ կայարանի համար սահմանված կարգով։ Այդ կարգի խանգարումը, նույնպես և ի դեպս յերևան հանելու ուղիների վրա կողմնակի անձնավորություններին, անձամբ միջոցներ ձեռք առնել հեռացնելու նրանց և յենթակա դեպքերում դիմել սլաքային պահակի հերթապահի ոգնությանը։ Այն դեպքում, յերբ հայտնաբերվում է բեռների, շարժական կազմի և կամ ընդհանրապես ուղու կայքի հափշտակում կամ փչացվելը, ուղու հերթապահը պարտավոր է անհապաղ զեկուցել կայարանային հերթապահ դիսպետչերին, իսկ այնտեղ, ուր դիսպետչերային հրամանատարությունը չի ընդունված, կայարանի հերթապահին, ուղիների պահակի հերթապահին և գծային պահականոցի հերթապահին (ДТОГУГБ Н. К. В. Д.).

§ 24. Այն դեպքում, յերբ ուղիների հերթապահի շրջանում վորևէ խորտակման, նավավթարի պատահար կպատահե, կամ յերևան է հանվում վորևէ անսարքություն, նա պետք է կարգադրե յերկյուղալի

տեղն ապահովել սահմանված ազդանշաններով և հաղորդել այդ մասին կայարանային հերթապահ դիսպետչերին և կայարանի հերթապահին։ Այդ դեպքի մասին ուղիների հերթապահը պետք է ձևակերպել ակտով, յենթարկելով դրան մյուս ծառայության աշխատավորներին և ամեն միջոցներ ձեռք առնել՝ պարզաբանելու խորտակման կամ նավավթարի պատճառները և հանցավոր աշխատավորներին։

§ 25. Մեծ կայարաններում, ուր կան մեծ քանակությամբ, վորմածային ուղիներում, ըստ կայարանապետի կարգադրության, ուղիների հերթապահի վրա կարող է պարտականություն դրվել յուրաքանչյուր որ զննել իր աշխատանքի շրջանում սլաքները և կառուցվածքները (С. Ц. Б.)։

§ 26. Ուղիների հերթապահն աշխատելու ժամանակ պետք է լինի սահմանված ձևով և ունենա իր մոտ՝

ա) Ցերեկով կարմիր և կանաչ դրոշակներ.

բ) Ձեռքի վառած ազդանշանի լապտեր՝ մութ և մառախուղային ժամանակ.

գ) Ձեռքի սուլիչ.

դ) Ժամացույց։

## VI. Ուղիի հերթապահի իրավունքները

§ 27. Ուղիների հերթապահն իրավունք ունի իր հերթապահության ժամանակ բոլոր իրեն ստորադրյալներին կարգադրություններ տալ։

Նրա կարգադրությունները չկատարելու և պաշտոնական կարգապահությունը խախտելու մասին ուղիների հերթապահը իրավունք ունի նրա ստորադրյալ շահագործման ծառայության աշխատավորների



վրա կարգապահական տույժ դնել իբրև նկատողություն, խիստ հանդիմանություն (կանոնադրության 36-րդ հոդված՝ յերկաթուղիների փոխադրական բանվորների և ծառայողների կարգապահության մասին)։

Ուրիշ ապասավորության պաշտոնի հանցավոր աշխատավորների վերաբերյալ ուղիների հերթապահը կզեկուցե կայարանապետին։

§ 28. Ուղիների հերթապահն իրավունք ունի իրեն ստորադրյալ աշխատավորին հեռացնել հերթապահությունից, յեթե այդ աշխատավորի գործողությունը յերթևեկի և ուղիի կայքի պահպանությանն սպառնալիք է առաջացնում և նրա պարտականությունները ժամանակավոր կատարման համար ուրիշին հանձնելու և ամեն հեռացման դեպքի մասին զեկուցել կայարանապետին։

## VII. Ուղիների հերթապահի պատասխանատվությունը

§ 29. Ուղիների հերթապահը պատասխանատու է, յերբ չի կատարում սույն հրահանգի պահանջները, տեխնիկական շահագործման կանոնները բոլոր հավելվածներով, վորոնք հրատարակված են վարիչների զարգացման համար, ազդանշան տալու կանոնները, յերկաթուղու բանվորների և ծառայողների կարգապահության կանոնները, նույնպես և ուղու հերթապահի շրջանի վերաբերյալ գոյություն ունեցող կարգադրությունները, վորոնք պետք է հայտարարվեն կամ նրանց անձամբ տրվեն։

§ 30. Բոլոր հանցանքների, զանցառության և իր պարտականությունների անկանոն կատարման հա-



ZUUՌ-Арм. ССР им. А. Мясникяна

մար, ուղիների հերթապահը ենթարկվում է կարգապահական տույժի՝ սահմանված կարգով։

Առավել լուրջ հանցանքների համար, որոնցից կարող են առաջանալ խորտակումներ, ավարիաներ, շարժական կազմի փչացումն կամ երթևեկի քայքայումն, նույնպես և որևէ հանցանք պաշտոնի վերաբերմամբ, ենթարկվում են դատաստանական պատասխանատվության։

§ 31. Անկախ պատասխանատվությունից, որին ուղիների հերթապահը ենթակա է իր անձնական աշխատանքի վերաբերյալ, նա նույնպես պատասխանատու է և իր ստորադրյալների ծառայության զանցառություններին այն դեպքերում, երբ զանցառությունները առաջացել են իբրև հետևանք ուղիների հերթապահի այդ անձանց տրված հանձնարարությունների ոչ ճիշտ և կանոնավոր պարզաբանելուց, կամ այդ անձնավորությանը նա հանձնած է եղել այնպիսի անձի, որն անպատրաստ է եղել տրված հանձնարարությունը կատարելու։

Շահագործման Կենտրոնական կառավարչության տեխնիկական սեկտորի պետի տեղակալ՝ ՊԵԿԿԵՐ

## ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ՆԿԱՏԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

TURKMENISTAN
DØVLET KITAPHANASЬ
ТУРКМЕНСКАЯ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ ССР
им. А. Мясникяна
ՀՀ Ազգային գրադարան
NL0305077

ՁՐԻ

24.137

Н. К. П. С.

# ИНСТРУКЦИЯ
## ДЕЖУРНОМУ по ПУТЯМ

Издание Зак. Жел. Дор.